ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1կՅ-01-2019

«29» 01 2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա.Օբույանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Նվիրատու» մի կողմից, և «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող՝ Գ.Աբգարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Նվիրառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ի կատարումն «2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») պահանջների և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 1079 ծրագրի «Աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայություններ» թիվ 11002 դասիչով միջոցառման շրջանակներում (այսուհետ՝ Միջոցառումներ)՝ Նվիրատուն սեփականության իրավունքով Նվիրառուին անհատույց հատկացնում է 30 837 500 (երեսուն միլիոն ութ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ դրամաշնորհ՝ սույն պայմանագրի N 4 հավելվածով՝ «Վճարման ժամանակացույց» սահմանված ժամկետներում:

1.1. Միջոցառումներն իրականացվելու են սույն պայմանագրի N 1 հավելվածի՝ «Տեխնիկական բնութագիր» և N 2 հավելվածի՝ «Միջոցառումների իրականացման ժամանակացույց» պահանջներին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը.

2.1.2 Առանց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Նվիրառուի կողմից իրականացված միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) Նվիրառուն խախտել է միջոցառումների իրականացման ժամկետը և այն չի կարող մատուցվել ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել միջոցառումների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար

չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Նվիրառուից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը.

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան իրականացված միջոցառումների արդյունքը, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Նվիրառուին:

2.2.2 Միջոցառումների արդյունքն ընդունելու դեպքում Նվիրառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 4.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Նվիրառուն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև միջոցառումների արդյունքը Նվիրատուին ներկայացնելը, Նվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Նվիրատուից պահանջել վճարելու մատուցված միջոցառումների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև միջոցառումների արդյունքը Նվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Նվիրատուին:

2.3.3 Նվիրատուի կողմից ժամկետների խախտման դեպքում Նվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 4.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Նվիրառուն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել միջոցառումների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Նվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Նվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Նվիրատուին վճարել սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել միջոցառման և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով, իսկ հաշվետու տարվա արդյունքներով պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով չօգտագործված ֆինանսական միջոցները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.6 Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Նվիրառուն յուրաքանչյուր ամիս միջոցառումների ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուին է հանձնում միջոցառումների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Նվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ միջոցառումները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Նվիրառուի կողմից իրականացված միջոցառումների արդյունքը Նվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

3.4. Իրականացված միջոցառումների վերջնահաշվարկը իրականացվում է ըստ եռամսյակային տվյալների:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Նվիրառուն պատասխանատվություն է կրում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

4.2 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Նվիրատուի կողմից միջոցառումների արդյունքը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Նվիրառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 1 %-ի չափով:

4.3 Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետը խախտելու դեպքում Նվիրառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չիրականացված միջոցառման արժեքի 0,05 %-ի չափով:

4.4 Սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառումների իրականացման արդյունքում Նվիրառուին վճարման ենթակա գումարներից:

4.5 Նվիրատուի կողմից վճարման համար նախատեսված ժամկետի խախտման համար Նվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

4.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5. Մոնիթորինգը

5.1. Նվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով կարող է իրականացնել մոնիթորինգ:

5.2. Մոնիթորինգն իրականացվում է Նվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

5.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Նվիրառուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

5.4. Նվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

5.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Նվիրառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը, իսկ պայմանագրի դրույթները գործում են 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ծագած իրավահարաբերությունների վրա:

Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N4 հավելվածները, բաղկացած 7 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն վ ի ր ա տ ու	Ն վ ի ր ա ռ ու
ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե	«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք.Երևան, Տիգրան Մեծի 4	ք. Երևան, Դ.Անհաղթի 23
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011145035	Հ/Հ 900018002171
ՀՎՀՀ 02528489	ՀՎՀՀ 02504535
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար	Տնօրենի պարտականությունները կատարող
---------- Ա. Օբոսյան	---------- Գ.Աբգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«23» հունվարի 2019թ.
կնքված N244-01-2019պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մատուցման ենթակա միջոցառումներն են՝ Պետական գույքի մասնավորեցման ծրագրերի ցանկերում ընդգրկված գույքի վաճառքը՝ «Պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման/ մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված մասնավորեցման ձևերով՝ աճուրդ, ուղղակի վաճառք, բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, ՀՀ կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով վաճառքի ներկայացված պետական գույքի օտարումը աճուրդով, ինչպես նաև վարձակալության տրամադրման աճուրդների կազմակերպում և անցկացում:

Պետական գույքի մասնավորեցման ծրագրերի ցանկերում ընդգրկված գույքի վաճառքի ծառայությունը մատուցելիս պետք է ղեկավարվել՝

- ՀՀ կառավարության 1998թ. մայիսի 6-ի թիվ 277 որոշմամբ հաստատված « ՈՒղղակի վաճառքի ձևով պետական գույքի մասնավորեցման» կարգով,
- ՀՀ կառավարության 1998թ. մայիսի 8-ի թիվ 278 որոշմամբ հաստատված « Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևով պետական գույքի մասնավորեցման» կարգով,
- ՀՀ կառավարության 1998թ. հունիսի 25-ի թիվ 387 որոշմամբ հաստատված «Պետական գույքի աճուրդով մասնավորեցման» կարգով,
- ՀՀ կառավարության 1999թ. օգոստոսի 5-ի թիվ 499 որոշմամբ հաստատված «Կանոնադրական կապիտալի 50% -ից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող ընկերությունների բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը կանոնակարգելու մասին» կարգով,
- ՀՀ կառավարության 2009թ.հունվարի 8-ի թիվ 26-Ն որոշմամբ հաստատված «Լուծարումից հետո պետությանն անցած գույքի տնօրինման» կարգով:
- ՀՀ կառավարության կողմից սահմանված մասնավորեցման այլ ձևերի հաստատված կանոնակարգերով և դրանցում կատարված փոփոխություններով,

Պետական գույքի օտարման ծառայությունը մատուցելիս պետք է ղեկավարվել՝

- «Սակարկությունների մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող կանոնակարգերով
- ՀՀ կառավարության 2003թ. հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշմամբ հաստատված «Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքի օտարման» կարգով:

Պետական գույքի վարձակալության իրավունքի տրամադրման աճուրդների կազմակերպման ծառայությունները մատուցելից պետք է ղեկավարվել՝

- ՀՀ կառավարության 2001թ. փետրվարի 22-ի թիվ 125 որոշմամբ /որոշումը խմբագրված է 26.03.2015թ. թիվ 330-Ն/ հաստատված «Պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված /ամրացված/ գույքի վարձակալության, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին

ամրացված գույքի մինչև մեկ տարի ժամկետով վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» կարգով:

Ն վ ի ր ա տ ու	Ն վ ի ր ա ռ ու
ՀՀ ՏՉՆՆ պետական գույքի	«Աճուրդի կենտրոն» պետական ոչ
կառավարման կոմիտե	առևտրային կազմակերպություն
ք.Երևան, Տիգրան Մեծի 4	ք. Երևան, Դ.Անհաղթի 23
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն	գործառնական վարչություն
Հ/Հ 900011145035	Հ/Հ 900018002171
ՀՎՀՀ 02528489	ՀՎՀՀ 02504535
Աշխատակազմի ղեկավարի	Տնօրենի պարտականությունները
պաշտոնակատար	կատարող
---------- Ա. Օբոսյան	---------- Գ.Աբգարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«23» 01 2019թ.
ԱԿ-01-2019 կնքված պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացումը 2019թ. ընթացքում			
	Աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայություններ	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
		75	150	225	300

Ն վ ի ր ա տ ու
ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
ք.Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011145035
ՀՎՀՀ 02528489
Աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար
_____ Ա. Օբոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Ն վ ի ր ա ռ ու
«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք. Երևան, Դ.Անհաղթի 23
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900018002171
ՀՎՀՀ 02504535
Տնօրենի պարտականությունները կատարող
_____ Գ.Աբգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N3
«23» 01 2019 թ.
կնքված N պայմանագրի 24-01-2019

Ն վ ի ր ա տ ու
ՀՀ ՏՀՇՆ պետական գույքի կառավարման կոմիտե
ք.Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011145035
ՀՎՀՀ 02528489

Ն վ ի ր ա ռ ու
«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք. Երևան, Դ.Անհաղթի 23
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900018002171
ՀՎՀՀ 02504535

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » 2019թ.

Պայմանագրի անվանումը՝ աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքների դրամաշնորհի պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » 2019թ.:

Պայմանագրի համարը՝

Նվիրատուն՝ ՀՀ ՏՀՇՆ պետական գույքի կառավարման կոմիտեն, ի դեմս՝ կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա.Օբոսյանի և Նվիրառուն՝ «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի պարտականությունները կատարող՝ Գ. Աբգարյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ « » _____ 2019թ. կազմված տեխնիկական հսկողության Պետական գույքի օտարման բաժնի N եզրակացությունը այն մասին, որ պայմանագրով նախատեսված, ստորև նշված միջոցառումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և միջոցառումների մատուցման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:

Պայմանագրի շրջանակներում Նվիրառուն « » ---------- 2019թ.-ից « » --------- 2019թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները՝

Միջոցառման համառոտ նկարագիրը	Միջոցառումներ ի քանակական ցուցանիշները	Միջոցառումների իրականացման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայություններ				
Ընդամենը				

Նվիրառու՝

(ստորագրություն)

Գ.Աբգարյան
(անուն ազգանուն)

Կ.S.

Նվիրատու՝

(ստորագրություն)

Ա.Օբոսյան
(անուն ազգանուն)

Կ.S.

Հավելվ
«23» 01
Ա4-01-2019 կնքված պայմա

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ. դրամ/

NN	Միջոցառման անվանումը	Առաջի եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
1	2	3	4	5	7
1	Աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայություններ	5149,9	12859,3	20568,7	30837,5

Ն վ ի ր ա տ ու

ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
ք.Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011145035
ՀՎՀՀ 02528489
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար

-------------------- Ա. Օռնոյան
/ստորագրություն/

Կ.Տ

Ն վ ի ր ա ռ ու

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք. Երևան, Դ.Անհաղթի 23
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900018002171
ՀՎՀՀ 02504535
Տնօրենի պարտականությունները կատարող

-------------------- Գ.Արզարյան
/ստորագրություն/

Կ.Տ

Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ

Հավելված N5
«29» 01 2019 թ.
կնքված N պայմանագրի 29-01-2019

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ _____ Ն. ԲԱԲԱՅԱՆ
ստորագրություն

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի համակարգում գործող «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի

եկամուտների և ծախսերի

01 հունվար - 25 դեկտեմբեր 2019թվականի ժամանակահատվածի համար

(հազար դրամ)

N/N	անվանումները	NN	Ընդամենը Դրամաշնորհ պետ.բյուջեից	այդ թվում՝ ըստ եռամսյակների (աճողական)			
				1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	տարի
1	2	3	4	5	6	8	8
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		**30837.50**	**5149.90**	**12859.30**	**20568.70**	**30837.50**
120000	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ**		**30837.50**	**5149.90**	**12859.30**	**20568.70**	**30837.50**
120000	**Ընդամենը՝ ծախսեր**		**30757.50**	**5109.90**	**12819.30**	**20528.70**	**30757.50**
	այդ թվում						
121000	Աշխատանքի վարձատրություն	411100	26960.50	3916.70	10925.60	17912.20	26960.50
	այդ թվում						
121000	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411100	26960.50	3916.70	10925.60	17912.20	26960.50
122000	**Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման դիմաց վճարներ՝ ԸՆԴԱՄԵՆԸ**		**3797.00**	**1193.20**	**1893.70**	**2616.50**	**3797.00**
	այդ թվում						
122010	Բանկային ծառայություններ	421100	20.00	5.00	10.00	15.00	20.00
122020	Էներգետիկ ծառայություններ	421200	1700.00	660.00	900.00	1050.00	1700.00
122030	Կոմունալ ծառայություններ	421300	20.00	2.20	6.70	11.50	20.00
122040	Կապի ծառայություններ	421400	600.00	150.00	300.00	450.00	600.00
122050	Ներքին գործուղումներ	422100	90.00	0.00	35.00	65.00	90.00
122060	Համակարգչային ծառայություններ	423200	124.00	16.00	27.00	90.00	124.00
122070	Տեղեկատվական ծառայություններ	423400	80.00	15.00	35.00	55.00	80.00

122150	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425200	120,00	30,00	55,00	90,00	120,00
122160	Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	413,00	150,00	200,00	300,00	413,00
122170	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	150,00	45,00	85,00	130,00	150,00
122180	Տրանսպորտային նյութեր	426400	480,00	120,00	240,00	360,00	480,00
122190	***ԱՅԼ ԾԱԽՍԵՐ***	486100	***496,50***	***40,00***	***40,00***	***40,00***	***80,00***
	այդ թվում						
122200	Պարտադիր վճարներ	482300	80,00	40,00	40,00	40,00	80,00
122210	այլ ծախսեր	486100	416,50	0,00	0,00	0,00	0,00
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝		***30837,50***	***5149,90***	***12859,30***	***20568,7***	***30837,50***

*** «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը ԱԱՀ -ով չի հարկվում:**

« » _____ 2019թ.

«Աճուրդի կենտրոն » ՊՈԱԿ-ն տնօրենի
պարտականությունները կատարող՝ Գ.Աբգարյան

Գլխավոր հաշվապահ՝ Ա.Շաշիկյան